

եղած են: Ձեր՝ ոսկին ու արծաթը ժանգոտած է, և անոնց ժանգը ձեզի զէմ վկայ ախար բլրայ, ու մեր մարմինը ախար ուտել կրակի մը պէս (Յկր. Ե. 1-3): Կը կարծուի որ անկարելի է սրտի մը մէջ հաւատարմութիւնը բլրայ ազատութեան: Բայց իւրողութիւններ ցոյց կուտան թէ կարելի է: Նախ այն պատճառաւ որ ազատը երբեք չ'զգար թէ ազատութեան մարմինն մը ունի, ան աւելի կը կարծէ թէ իր ուղղութիւնը խնայողութիւնն մըն է և ոչ ազատութիւն: Երկրորդ՝ ստուգիւ զժողովը է և նոյն խեղ անկարելի, ճշգրիտ սահմանադրած մը հաստատելը մէջ խնայողութեան և ազատութեան: Միայն ճշմարիտ հաւատարմ, կենդանի հաւատարմ՝ որ անհնական հաղորդակցութիւն մըն է Աստուծոյ հետ, կարող է զմեզ լուսարեւելի այս կէտին մէջ, մեզ զնկոյժ հանդէպ հարստութեան այնպիսի բարեյական պատուաւոր կեցուածքով մը, որ իբր Աստուծոյ անսանձեր կը պարտաւորուին յանձնակցութեան իրեն պատկանած և մեզի վստահութեամբ նիւթակառ ինչ-բերը:

Իստատովաններ որ Առաքեալին յիշատակած պայմաններով եթէ բրիտանացի իրենց հաւատարմ ցոյց տային բնկերական յարաբերութեանց, խօսակցութեանց, աշխարհի և տաշտածոց զբաղմունքանց մէջ, յայնժամ ան պիտի բլրայ ունել յազմական և աւելի օգտակար քան ինչ որ արտը չէ:

Քաղաքս կը վերջացնեմ յիշելով ձեզի Յովորոս Առաքեալի երկու յորհրդերն: Երբ ինքն ալ կը վերջացնէ իր թուղթն: Նախ՝ յմոռանք երբեք ԱՂՅՔԻ, վասնզի արդարեւ ազգայն յոյժ զօրաւոր է: Եզիս մեզի նման մտրդային քնաթիւն ունէր և լիտլի վայելից բարեբար փորձառութիւններ և արդիւնները ազգայն: Մենք ևս կրնանք օգտուիլ ամէն օր և մեր կեանքի ամէն մասանց մէջ: Երկրորդ՝ շոնանք ամէնքս ալ միգ թափեալ որպէսզի ՀԱՒԱՏՔը ցոյց տանք զորոնականապէս և այց կերպով շահներ ինկած հոգիները կենսական և օծուն կեանքի մը մէջ:

Մանչեսթը Դէյմոն ԷՊՍ. ԴՈՐԵԱՆ

ՓՐԱԳԻՆ ՍՏԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Սուրբ տեղեւոյժ ձրգէ լաւեմ շարունակ,
Պատշէ՛ մատուր ծոցի՛ ուսկից կեանք բոցիկեցի,
Նրբիւրմի՛ եզիր համոյր ու մրցիւ,
Որ մօտեմա զու խօծի:
(Հովնական Միլնգ)



ԵԿԵՂԵՑԵԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒ

ՀԷՐՊԷՐԹ ԱԼԷՆ

Երկուց Եկեղեցեաց միութեան հարց մը խորհրդածութեան առարկայ դարձած էր, բողոքական եղբայրներու մասնաւոր շրջանակի մը մէջ, ի Վան՝ 1895ին, և Հէրպէրթ Ալէնի պէս ազատամիտ միութեան մը արամադրութիւնները զիւրաւ մշակուեցան առ այն: Եւ ահա մի օր 1895 Մարտ, 28 յօգուածէ բողոքացած հարցաբան մը կ'ստանան երկտասնեակ մը լուստարչական մատարականներ՝ բանիւ և զբով պատասխանելու հրաւերով: Խորհրդականցութեան մը յետոյ ինձ կը վիճակուի առանձին երթալ տեսնուիլ Ալէնին հետ, որ Սասունցի փախստականներու բնակած նպաստից պատճառով կտակածիլ դարձած էր յաշտ կուտակալ Պահրիին: Իսկ ևս իբրեւ ուսուցիչ արդէն յարարութեան մէջ էի իրեն հետ:

Մկրտիչ Խանիկեանի բնակարանին մէջ տասնեակ մը ուսուցիչ և մշակուած միութեան տէր անձանց գիշերային խորհրդակցութեան կը մասնակցէր նաև հոգեւոյս Մեսրոպ քահանայ ճանիկեան: Իսկ հարցաբանին մէջ կը յուշուէին վերատին ծննդեան, Եկեղեցեայ եօթը խորհուրդներէն ոմանց մատակարարութեան, ձէներու, արքայաբնիստութեան, մասունքներու, խաչի և պատկերաց յարգութեան և վերջապէս իրենց ըմբռնումին պատասխանող Եկեղեցական բարեկարգութեան մը կամ փոխադարձ գիշու մեկրով միութեան հարցեր: Վսեմ ու պաշտելի՛ միամտութիւն մը արդարեւ: Ահա՛ Ալէնի և իմ միջև տեղի ունեցած խօսակցութիւնը համառօտիւ:

— Հայ Եկեղեցեայ դաւանանքին կամ հանդանակին մէջ Նոր կտակարանի ոգւոյն և վարդապետութեանց հակառակ բան մը կը գտնէ՞ք արդեօք:

— Ո՛չ, բայց ձեր Եկեղեցին կեղեւի մը կամ վարագոյրի տակ կը ծածկէ քրիստոնէութեան ոգին:

— Եթէ դուք կ'ականարէ՞ք մեր Եկեղեցեայ ձէներուն, խորհուրդներու մատակարարութեան ձէներուն կամ արարողութեան,

ատոնք ծնունդ են ժամանակի, մեր ազգային բարքերուն, արեւելեան միասիրտականութեան և այլն. կաղմակերպութիւնն ու ոգին կը մնան սակայն միշտ նոյն և անփոփոխ, առաքելական և աւետարանական: Աւելի քան տասնընեակ երկար դարերու մարտիրոսութիւնը պերճախօս ապացոյց մը չէ՞ մեր եկեղեցւոյ զիտակից և կենդանի հաւատքին: Յետին ազէտ հայն իսկ հաւատքի աչքով կը թափանցէ պատեանին ներսէն ցոլացող անշէջ և կենդանի հոգիին: Միթէ բողոքական եկեղեցիներն ևս չունին բնաւ արտաքին ձեւեր և արարողութիւններ, որք՝ ըստ ձեր համոզումին՝ անշուշտ երբեք չեն խաթարեր ուղիղ հաւատքը:

— Բայց պատկերներու և մասունքներու յարգանքը, խաչի պաշտամունքը, սրբոց բարեխօսութիւնը և այլն, ինչպէս և հոգիներուն՝ դորժով և ո՛չ ձրի շնորհով արդարանալու վարդապետութիւնը չէ՞ն տանիր դէպի կռապաշտութիւն:

— Հռոմէական գետնադամբուններու (cathacombe) որոց վրայ գծուած կամ փորագրուած նկարներն ու խաչերն իրեն անողոք և անսուտ վկայ չեն ապացուցաներ որ նախագոյն դարերու ծնունդ են անոնք: Իսկ մեր եկեղեցին չ'ընդունիր երբեք արձան և մինչև է. դար միայն եկեղեցեաց սրենիքու կամ որմերու վրայ կը թռլատարէր զձեզ պատկերներ՝ այն ալ կաթողիկոսներուն միայն: Ը. դարու սկիզբները արարած միրայնապետի մը՝ պատկերաց յարգութեան պատճառով արեւելեան եկեղեցին իբր կռապաշտ ամբաստանելը և ի հերքումն այդ զրպարտութեան՝ Բիզանդիոնի կայսր՝ Լեւոն Իսաւրացիի պատկերամարտ հալածանքները սովորեցուցան չէ՞ն արդեօք: Պատմութիւնը քաջ գիտէ որ Ժ—ԺԶ. յետնագոյն դարերուն էր որ հետզհետէ յոյն և լատին յարաբերութեանց և նոյն իսկ ճշունքներու հետեւանքով մեր եկեղեցւոյն մուտ գտան պատկերներ, այլ և այլ տոներ ու ծէսեր, եկեղեցական զգեստուց տարազներ, և այլն, որք սակայն հոգին չեն եղծեր:

— Հապա սրբոց բարեխօսութիւնը. չէ՞ որ, ըստ Նոր Կտակարանի, մէկ է մեր միջնորդն ու բարեխօսը և այն ալ ինքն Քրիստոս է:

— Մեր եկեղեցւոյ հանգանակն ու խոր-

հուրդները ա՛յդ իսկ վարդապետութեան վրայ հիմնուած են: Իսկ սուրբերը բարեխօսութեան պատճառը գլխաւորապէս դաւաւոր բռնութիւնն ու հալածանքն է եղած, զի բարբարոս ազգերու ճիրաններուն մատնուած և նոյն իսկ քրիստոնեայ աշխարհէն անօգնական լքուած և յաճախ դաւաճանուած մարտիրոս ժողովորդ մը բնական էր որ ճարահատ զմէք նոյն սուրբերուն, որք իրեն տուն Քրիստոսի լոյս հաւատքը: Իսկ խաչեր, սրբոց մատունքներ և ուխտատեղիք մեզ կը յիշեցնեն Քողզութայի փրկագործ զոհն և մեր նահատակ նախնիքը, որոց յիշատակն եկեղեցւոյ կամ մարներուն ներքե միայն կրնանք պահպանել, քանէ որ չունինք ձեզ պէս ազատ հայրենիք: Ուրիմն եկեղեցին կը մնայ մեր անքոյթ ամբողջ և պանթէոնը: Այս կերպով մեր մէջ կրօն ու ազգութիւն, ուրիշ խօսքով՝ եկեղեցին ու հայ հայրենիք, համաձայն կը կազմեն սերտ և անլոյծ միութիւն մը զոր նայ իմաստեղութիւն կը կաշեն մեր գիւղացիները և անոր համար կը մեռնին: Ամբողջ տասնընեակ դար հուր, սուր, հալածանք, նաև յոյն և լատին մականքն ու բռնի միութեան ճիգերը կուր կոփեր և հիմն ի վերայ վիմի հաստատեր են Հայ եկեղեցին, զոր ճիգովքի զոհերն անգամ պիտի չյաջողին յաղթահարել: Միլիոնաւոր հայ մարտիրոսաց խնկելի ոսկորներով են կառուցուած անոր հիմերն ու կամարները: Նահատակաց կենսայորդ արիւնքն է որ շարունակ նոր կը նորոգուի ու կը պնդանայ շաղախն սրբազնասուրբ այն պատկանելի շինուածքին, որ է մեր պաշտելի Հայ եկեղեցին: Մեր հայ քրիստոնեան ամէն օր կը մեռնի ի սէր իւր եկեղեցւոյն, որ իրեն կը ներշնչէ յոյս յաւիտենին և որ ազբիւրն եղաւ մտքի լուսաւորութեան՝ շնորհիւ Ե. Գարու ոսկեղենիկ զրականութեան և անոր գերազոյն փառքը կազմող ոսկեղեցու թարգմանութեան Ս. Գրոց: Ի սէր Ճշմարտին և Լուսաւորչին՝ հայերը մերժեցին Արիւն Արամաղ, Զգաւսն Անանիս, Գեղիկն Աստղիկ և Վանապն Քաջ՝ հայ հեթանոսութեան ազգային փառքերը: Մերժեցին նաև կրակն ու մոխիրն անկ Զրազաշտին, և մահին աշխարհաւոր Խալափին՝ ի սէր քրիստոնեութեան յանձն առնելով անբնդհատ կրակի փորձութիւնն զարեր ու զարեր:

— Եւ սակայն ոտս խօսիլ, երդում բնել, կիրակին պղծել, ալքովի զործածութիւն, հային, և առ այդ ներողամիտ վերաբերումը վատ օրինակներով իրենց հօտը քաջայերոզ կղերին՝ սովորական զեղծումներ չեն ձեր մէջ:

— Եթէ կ'ընդունիք որ հաւատքը առանց զործոյ մեռեալ է, ուրիմն գեռ ծըխացող և թարմ ողջակէզն Սասնոյ, հայ ընտանեկան սրբութիւնը և անհատական ու հանրային գթութեան զործերը չեն ապացուցաներ մեր ճշմարիտ յարումն ի Գրիգորոս, և թէ հաւատքը կենդանի է մեր մէջ, ձեր ակնարկած թերութիւնները կը վերաբերին անհատներու և մասամբ մը սրղիւնք են բռնութեան և արկտութեան: Միթէ դուք ամերիկացիներդ ու Եւրոպայի լուսաւորեալ ազգերը անթերի և տիպաբար կենք մը կ'ապրի՞ք:

— Ուրեմն դուք Քրիստոսի բացարձակ պատուէնները կը շփոթէք ձեր կեանքի պայմաններուն հետ և փրկութիւնը կամ վերստին ծնունդը չէք բնորոշեր ըստ ոգւոյն և իմաստին:

— Ծիշդ է որ հայ քրիստոնէի ճինացան անթերի չէ. ճիշդ է որ մեր եկեղեցւոյ մէջ աւելորդապաշտութիւններ մօտ գտած են, կամ աղամանդին վրայ դարձու փայլն նստած է, և սակայն մեր մեծ մասամբ ազգայնացիներն է որ կը պահպանէ մեր ազգային ու կրօնական թանկագին աւանդութիւններն: Նա իւր տղիտութեամբ իսկ անգթար կը պահէ նաեւ միամտութիւնն «Քրիստոսէ կրանեալ տղայոց», և հաւատքն՝ Պօղոսի նախընտրած «յիմարներուն»: Այո՛, այդ կէտն է որ զհայն կապում կը պահէ Քրիստոսի հետ, ինչ փոյթ թէ հայ քրիստոնէութիւնը չի համապատասխաներ ձեր մեկնիչներու և հարկբարձր շարանուանութեանց այս կամ այն տեսակէտին կամ արդիական բնորոշումներուն: Եւ սակայն մեր եկեղեցին ևս փրկագործութիւն կ'ապրէ և կը շարունակէ Ս. Հոգւոյ ձրի շնորհքն, իսկ բարի զործերը կը պատուիրէ ո՛չ իբրեւ միջոց, այլ որպէս պարզ պարտականութիւն:

— Այսու ամենայնիւ ձեր անուս կղերի հովուական խնամքին լքուած են քաղաքացի և գիւղացի զանգուածները:

Եւ այդ իսկ է հրաշքը: «Ծիւրժ յիմարները» կամ տկարները չեն որ կը կատա-

րեն մեծամեծ զործեր: Կորցուաց աշխարհի, Պահաանի և Սասնոյ լեռներու խեղճ երկշներ չեն որ քրիստոնէութիւնը կը պահպանեն այդ բարբարոս միջավայրերուն մէջ: Անոնք իրապէս աշնուական ազգս են որ մասնահաշուով կը դանեն կամ կը ճըշգեն տօներու օրերը. և սակայն այդպիսի երեցներն են որ ամէն տեղ՝ ինչպէ գեռ վերջերս ի Սասուն՝ իրենց հօտին գլուխը անցած, մէկ ձեռքը խաչ, միւս ձեռք սուր, «Ղեւոնդեանց հանգոյն» կուռեցան և իբր «հովիւ քաջ» իրենց «անձը գրին ի վերայ ոչխարաց» ի սէր Լուսաւորչի սուրբ հաւատքին: Ասոնցմէ շատեր յաճախ իրենց հօտին հետ տարագիր՝ թողին իրենց ետեւէն սրբազան յիշատակարաններ, ինչպէս վանք, տաճար, շիրիմ, որոնք ի համբոյր կուգան ամէն կողմէ վայրագատին բեկորները ցեղին: Մի՛ փորձէք ուրեմն բարեկարգել մեր այնքան կենսախայտ եկեղեցին կամ գմեղ բաժնել այնքան տրեւնեութիւնը նուիրագործուած այս սրբազնասուրբ աւանդէն դուրսէն կտակեցին՝ բացի Լուսաւորչէն՝ նաեւ Սահակներ, Մեսրոպներ և ներսէներ: Մենք չենք կրնար զատուիլ այն երկցս օրհնեալ հաստատութիւնէն, որ իւր անփշրկի վահանովը ո՛չ միայն կը պահպանէ մեր նախնի փառքին մնացորդները և ազգային կամ կրօնական առանձնաշնորհները, այլ և մեր գոյութեան անխախտ խաբիսը և ահապ զատուիլ փառքէն: Եւ այդպէս կը կազմէ հայ ցեղի գերազոյն պարճանքն՝ լինելով լուսաճանաչ փարոս մը խաւարակուս արեւելքի մէջ և միանգամայն ներշնչող ինքնայատուկ ճարտարապետութեան մը, աստուածային երաժշտութեան մը և սրբազան չքնաղ բանաստեղծութեան մը: Եկեղեցին է վերջապէս մշակն ու զատարար կը հայ հոգիին ինչպէս և ծնող մեր ազգային գրականութեան և արթուն պահպանը հայ մտքի դարաւոր զանձերուն: Այս ամէնէն զատ պէտք է գիտնանք նաեւ, բարեկամ, որ մեր համատ պայմաններուն մէջ մեր զործը չէ և ներկայ քաղաքական հանգամանքներուն երբեք՝ նոյն իսկ ձեռնհաս իշխանութեանց կարողութեան սահմանէն դուրս է եկեղեցւոյ միութեան կամ բարեկարգութեան

այնքան փափուկ հարցով զբաղելը: Ա՛հ, վերջապէս, եթէ երբեք վիճակուէր մեզ աչգովին զոնէ կէս դար Միացեալ Նահանգաց ազատ երկինքին տակ ապրիլ եւ ձեզ ամերիկացոց հարկադրուէր նոյնքան ժամանակ Թուրքիայի զոսխային պայմաններու ներքեւ տուայտիլ, հանգամանքները նոյն պիտի մնային արգեօք: Նաեւ դուք՝ ամերիկացիներդ՝ ձեր փառքերը կը վայելէք արեւու լոյսով, մինչ մենք կրօնի վահանով միայն կրնանք պաշտպանել մեր փառաւոր անցեալի զոյգն մնացորդները:

Կարծես աւելի հեռապատկերի մը կամ անիմացարտ կարեկիւթեան մը հաւանականութենէն ցնցուած՝ ընդհատեց զիս եւսմի խօսակցիցս՝ ըսելով, «Անտարակոյս հմ որ. այդպիսի դժիւմ պատահականութեան մը պարագային՝ մեր ամերիկացիներու վիճակը, ա՛հ, ձերինէն վատթարագոյն պիտի լինէր, որովհետեւ մենք չունինք հայ ցեղին կամքն պողպատեայ՝ դարերու արիւնոս փորձութիւններով թրծուած: Կոչէ՛ք դուք միշտ պինդ փարած ձեր մարտիրոս եկեղեցիին որ կը հաւատամ թէ՛ կենսալոյդ ազրիւնն է ձեր ազնիւ ու կենսունակ ցեղի բոլոր առաքինութիւններուն»: Եւ զոյգ ընդ բանին «Ես իմ ձեռքովս ահա կը պատեմ, ըսաւ, այս հարցարանը եւ միանգամայն ձեզմէ սորվիլ պատմութիւնը «ձեր առաքիկական սուրբ եկեղեցիին»: Ուրախութեամբ ցոյց տուի աղբիւրներն ու նաեւ իբր վեց ռմիս շարքիւ երկու անգամով նախնիս լսեց մեր կրօնազգային պատմութեան հոլովոյթները, զոր կը նօթագրէր մեծ հռանդով:

Ահա՛ այս էր հայ եկեղեցիի ոգւոյն եւ պատմութեան անձանօթ բազմաթիւ ամերիկացի միսիօնարներու մտայնութիւնը:

Գանիրի

Հ. ԵՐԱՄԵԱՆ

ՆԱԿԱԾՈՒԹԻՒՆ

ՍԻՈՆ, ունէ պատասխանատւութիւն չ'աւանդներ յօղաւածազիրներու կողմէն յայտնուած կարծիքներու մասին:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի Ս. ԳԻՐՍ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Գննեցիք զգիրս: ԹՎ 5, 39

Բ

ՅԱԻԹԵԱՆ ԵՒ ԻՇԱՆԱՍԻԹԻՒՆՔ ՕՒՈՑ

Ա. «Եւ դուք որ մուսալն էիք ի մեզս ձեր եւ յանցանս, յորս երբեմն զնայիք ըստ յախճենի աշխարհիս այսորիկ, ըստ իշխանի իշխանութեան օրոյս, այսոյ՝ որ այժմս ընդմիտեալ է յորդին ապստամբութեան» եւ որ ի կարգին⁽¹⁾:

(1) Նոր Կտակարան, ազգայ. յամի 1876 ի ազ. Ս. Յակ. Երուսաղէմ, ունի սխալ կիսադրութեամբ այսպէս՝ «...րս իշխանին իշխանութեան օրոյս այսոյ, որ այժմս...» որով իմաստ բանից ամենեւին իսկ խանդարիւ: Այլ այս կամակորոյրիւն բնագոյն չէ ինչ օտարախ. զի Երուսաղէմի ազգաբնակիցն հետեւադրութեան է նախընթաց կանխադրյալ ազգաբնակից, որ զարմանալի զի զայսպիսի անպատեհ վերադարձ զործեն, «նախնական կարծեօք՝ զիսկուածաւոր անհաղթութեամբ, եւ կամ քիւրմացութեամբ»: Ըստ այսմ Ոսկանայ Աճ. Մասեան, ազ. յԱմսէրսամ յամի 1666 ունի՝ «...րս իշխանին իշխանութեան օրոյս այսոյ՝ որ...» հանգչեց մին ունի եւ Աճ. Մասեան ազ. ի ձեռն Միսիօնայ Արքայի ի Վենետիկ, 1733.—զարեալ վերադարձն կիսադրութեամբ ընթեւնալ Զօհրապետն Աճ. Մաս. Վենետիկ 1805, միայն զորքն փոխելով ի ստորակէ՝ «...րս իշխ. իշխ. օրոյս այսոյ, որ...» րս նմին օրեակի է եւ ազգայ. Միսիօնայ Արքայի ի Վենետիկ յամ 1860.—Որչափ իմ ծանօթ է, միայն Կասանդրուպոյ 1-95 տարւոյ ազգաբնակիցն ունի զուղիղ ընթերցումն, նշելիս կիսադրութեամբ՝ «...րս իշխանին իշխանութեան օրոյս, այսոյ՝ որ...» Աւելորդ է ասել՝ թէ այսոյ բացայայտիչ է նախընթաց իշխանին.— ի դէպ քալ իմ՝ ասեմ հարեւանցի իմ յուսածն՝ թէ ընկալան հրատարակութիւն մի Հայ Աճ. Մասեան, կամ այժմիկ գեթ Նոր Կտակ. եւեթ, անհրաժեշտ պէտք մի է.— ազգաբնակիցն մի րս պատմագրաց արդի զիտութեան (անհուշ է նշուց մասնագէտ ձեռննաւ սեղեկաց) յարդարեալ եւ սեռն մասնագէտ արարեալ նշելիս րս ընթերցողն ձեռնագիր մասնից, հանդերձ պէտքն ընթերցումով գտնէ նշանաւորացն ձեռագիր օրեակաց, եւ՝ եթէ հնար ինչ ինչ՝ համեմատութեամբ Յունարէն բնագրին, կամ լու եւս Յուն. այլեւայլ բնագրաց, եւ անխաղ ազգաբնակիցն: Յայտն է՝ թէ այսպիսի աշխատութիւն արգաւել վաղուց փափաքելի է զիսմոյ՝ որ պարագային յառանձինն ընթերցան Յունարէն բնագրին Նոր Կտակ. եւ պատմութեան նորին, եւ որք առ ի վերահազմութիւն սկզբնական Յուն. բնագրին՝ յայտն միջի՝ նաեւ զՀայերէն բարգմանութիւնն կարեւոր հարկ համարին: Զպակասութիւնս զայս լնուլ անկ եւ պատշաճ էր, կարծեմ, Ս. Յակ. Տպարանին, այնու՝ զի ի Մասեանադարանի Ս. Յակ. գտնին ընթերցանութեան օրեակի Ն. Կ. ոչ սակաւ է: